ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի 2025թ. մայիսի 8-ի նիստի (հարցման կարգով)

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի հերթական N9 նիստի կայացման համար իրականացվել է էլեկտրոնային հարցում՝ ս.թ. մայիսի 6-ից 8-ը: Խորհրդի 32 անդամները էլեկտրոնային ծանուցմամբ ստացել են նիստի օրակարգը (օրակարգը կցվում է), մագիստրոսական կրթական ծրագրերում առաջարկվող փոփոխությունները, մագիստրոսական կրթական ծրագրերի (առկա և հեռակա ուսուցման) նոր ուսպլանները:

ՕՐԱԿԱՐԳ

1. ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի «Գործարար վարչարարություն (կառավարում)» մագիստրոսական կրթական ծրագրի (առկա և հեռակա ուսուցման) ուսումնական պլաններում առաջարկվող փոփոխությունների հաստատում:
2. ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի «Շուկայագիտություն (մարքեթինգ)» մագիստրոսական կրթական ծրագրի (առկա և հեռակա ուսուցման) ուսումնական պլաններում առաջարկվող փոփոխությունների հաստատում:

Էլեկտրոնային հարցման արդյունքներն ամփոփել են խորհրդի նախագահ դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը, խորհրդի քարտուղար տ.գ.թ., դոցենտ Հ.Մարգարյանը: Խորհրդի 32 անդամներից 27-ը մասնակցել են էլեկտրոնային հարցմանը: Գրանցված ցուցանիշը բավարար հիմք է գիտական խորհրդի N9 նիստի օրակարգային հարցերի վերաբերյալ որոշումների կայացման համար:

1. ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի 29.04.2025թ. կայացած թիվ 7 նիստի որոշումը և էլեկտրոնային հարցման արդյունքները՝ հաստատել առկա ուսուցման «Գործարար վարչարարություն (կառավարում)» մագիստրոսական կրթական ծրագրի՝ 1,5 տարի տևողությամբ (90 ECTS) և հեռակա ուսուցման՝ 2 տարի տևողությամբ (90 ECTS) ուսումնական պլաններում առաջարկվող փոփոխությունները (27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

2. ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի 29.04.2025թ. կայացած թիվ 7 նիստի որոշումը և էլեկտրոնային հարցման արդյունքները՝ հաստատել առկա ուսուցման «Շուկայագիտություն (մարքեթինգ)» մագիստրոսական կրթական ծրագրի՝ 1,5 տարի տևողությամբ (90 ECTS) և հեռակա ուսուցման՝ 2 տարի տևողությամբ (90 ECTS) ուսումնական պլաններում առաջարկվող փոփոխությունները (27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ